ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
susannagrigoryan@ysu.am
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու
ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ
nairaparonyan@ysu.am
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասիստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՏԴ 811.19 (091)

ԲԱՌԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ ԹԵՈԴՈՐՈՍ ՔՌԹԵՆԱՎՈՐԻ «ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ» ԵՎ «ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ» ՃԱՌԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. աստվածաբանական, բառային կրկնություններ, խոսքի արտահայտչականություն, իմաստային, հակադրություն, համեմատություններ, ոճական միջոցներ, լեզվական արվեստ:

Ключевые слова и выражения: теологические, словесные повторения, выразительность речи, семантичный, контраст, сравнения, стилистические средства, языковое искусство.

Key words and expressions: theological, reduplications, expressiveness of speech, semantic, contrast, comparisons, stylistic tricks, linguistic art.

Հայ մատենագիր և աստվածաբան Թեոդորոս Քոթենավորի մասին կենսագրական տեղեկությունները խիստ կցկտուր են: Հայտնի է, որ նա ծնվել է 7-րդ դարի սկզբին: Նա Կոմիտաս կաթողիկոսի եղբորորդին է և Եզր կաթողիկոսի քեռորդին: Թեոդորոսի աշակերտներն են եղել Սահակ Ձորոփորեցին և Հովհան Օձնեցին: Թ. Քոթենավորի գրչին են պատկանում երեք ճառեր՝ «Ճառ ընդդէմ Մայրագումացոյն», «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ», «Գովեստ ի սուրբ Աստուածածինն», որոնք աչքի են ընկնում աստվածաբանական, գեղարվեստական արժանիքներով, հիացնում բառային արվեստի բացառիկ նմուշներով՝ վկայելով հեղինակի գեղագիտական բարձր ճաշակի, հարուստ ներաշխարհի մասին:

Յուրաքանչյուր հեղինակի գեղարվեստական մտածողությունն արտահայտող հիմնական միջոցը լեզուն է: Թ. Քոթենավորն իր ճառերում փոխաբերությունների, մակդիրների, համեմատությունների գործուն կիրառմամբ բառին հաղորդում է արտահայտչական նուրբ երանգներ,

գործածում զգացմունքների, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ:

Թ. Քոթենավորը հրաշալի կերպարաստեղծ է: Սուրբ Աստվածածինը և Սուրբ Խաչը նրա ճառերում բնութագրվում են ոճական նպատակներով գործածվող ամենաբազմազան մակդիրների միջոցով, որոնք պարունակում են նաև համեմատության ու փոխաբերության երանգներ, ունեն կիրառական ինքնատիպ դրսևորումներ: Ճառերում իրենց քանակով գերազանցում են ածականով արտահայտված, բարդ և ածանցավոր բառերի միջոցով գործածվող մակդիրները, որոնք յուրահատուկ զարդ են հեղինակի խոսքում՝ ***ամպատեսիլ սիւն*** (1253), ***անմաքուր հոսանուտ դառնաբեր կեանք*** (1254), ***անվթար ունակութիւն*** (1251), ***աստուածազարդ տապան*** (1252), ***արեւափառ նշոյլ*** (1253), ***բեւեկնակայծակ հրատալից արիւն*** (1253), ***երկնաթռիչ հաւատ*** (1256), ***լուսածին գերապանծ նիշփայտ*** (1251), ***խորանաշէն արկղ*** (1256), ***կայծակնաբորբոք ճառագայթ*** (1254), ***կենդանաբեր տապան*** (1252), ***կենդանասաղարթ դալարութիւն*** (1252), ***հիւթանիւթ հող*** (1254), ***հրաշաշաւիղ ուղեկցութիւն*** (1253), ***հրաշատեսիլ զաւազան*** (1253), ***հրասրեալ աստուածամուխ արիւն*** (1253), ***շնորհաշրջուատ բացատրութիւն*** (1251), ***ստեղծատեսակ հոգի*** (1253), ***տիգաբուխ եւ վտակահոս կենդանութիւն*** (1250), ***փշաղաժան մորենի*** (1254): Կարելի է անձանձրույթ շարունակել հոգեզմայլ այս շարքը, որով ողողված են ճառերը, և որի միջոցով ընդգծվում է Թ. Քոթենավորի անհատականությունը, նրա խոսքի հույժ զգացմունքայնությունն ու դրանից բխող պերճախոսությունը:

«Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» և «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ճառերում Թ. Քոթենավորի լեզվին առանձին թարմություն են հաղորդում երաժշտականությամբ օժտված առատորեն հանդիպող կրկնությունները՝ գործածված տարբեր բառերի, բառակապակցությունների, նույնիսկ նախադասությունների, նախդիրների ու նախադրությունների, շաղկապների միջոցով՝ ստեղծելով չափածո խոսքին բնորոշ հանգեր և խոսքին հաղորդելով հավելյալ արտահայտչականություն: Սուրբ Խաչը բնութագրվում է կրկնվող «***Ո՛վ ճշմարիտ աստուածային տունկ***»(1251), «***Ո՛վ սքանչելի սուրբ փայտ աստուածազարդեալ***» (1255) բառակապակցություններով, իսկ Սուրբ Կույսին վերաբերող վկայությունները սկսվում են բազմիցս կրկնվող «***ուրախացի՛ր***» ստորոգյալով. «***Ուրախացի՛ր*** բերկրական սրտիւ, ***ուրախացի՛ր*** բերկրական ձայնիւ, ***ուրախացի՛ր*** մեծ խնդութեամբ, Մարիա՛մ սրբուհի…, ***ուրախացի՛ր,*** հրճուողալի՛ց սրտիւ, ամենաւրհնեա՛լ ծնող…, ***ուրախացի՛ր*** խնդամտաբար սրտիւ, մա՛յր լուսոյ…, ***ուրախացի՛ր*** վայելչափառ սրտիւ, անհարսնացեա՛լ տիրուհի…: Դարձեալ ***ուրախացի՛ր***

արժանապատիւ սիրով: ***Ուրախացի՛ր,*** անհարսնացեա՛լ Մարիամ…»(1266): Այս նույն նախադասություններում կրկնվում է միջոցի խնդիրը՝ համեմված գեղեցկագույն մակդիրներով՝ հրճուողալից ***սրտիւ,*** խնդամտաբար ***սրտիւ***, վայելչափառ ***սրտիւ***: Ճառերում հաճախ կրկնվում է ժամանակի պարագան՝ «***Այսաւր*** հոսանք հոգէխաղացք տրամոռոգանեն զբուրաստանեալ աւետարանատունկ մանկունս եկեղեցւոյ …,__***այսաւր*** երկիրս երկինք եղեւ…, ***այսաւր*** հողաստեղծեալ զարմ ադամածնութեանս երկնաքաղաքացի անուանակոչութեամբ գրեցան, ***այսաւր*** նորափետուր հրաշիւք գեղեցկազարդեալ, ***այսաւր*** դառնացեալ աղբերք եւ լիճք ջրակուտից ի քաղցրութեան ճաշակս տրամադրին, ***այսաւր*** վտակք յաղբերաց առատաբերին ի խաղս եւ ի մարգագետինս» (1260): «***Այսաւր*** գայ կամաւորութեամբ յաշխարհ, որ յաշխարհի է եւ ի սմանէ ոչ երբէք մեկնեցաւ» (1262): Կրկնվում են դերանունները և նախդիրները՝ «Սոյնաւրինակ եւ յերկրորդ վայրս եկեսցէ ***ըստ*** զգաստ ***ըստ*** տեսական վարուց…» (1259): «***Քեւ*** լուծեալ, ***քեւ*** հորդեալ, ***քեւ*** նորոգեալ, ***քեւ*** պսակեալ, ***քեւ*** զուարճացեալ, ***քեւ*** բերկրեալ, ***քեւ*** լուսաւորեալ, ***քեւ*** տանջեալ, **քեւ** խայտառակեցաւ, ***քեւ*** բացաւ, ***քեւ*** կապեցաւ, ***քեւ*** հրաժարին, ***քեւ*** կնքին, ***քեւ*** աւրհնին, ***քեւ*** բաշխի, ***քեւ*** ուրախացան, ***քեւ*** ցնծան, ***քեւ*** բանան, ***քեւ*** զգաստանան»(1255): Լեզվական ցանկացած միավորի բազմակի կրկնությունը իր վրա լրացուցիչ ուշադրություն հրավիրելու համար այդ միավորն առանձնացնելով մյուսներից՝ այն դարձնում է ավելի շեշտված. դրանց միջոցով հեղինակը ուշադրություն է հրավիրում գործողության կատարման տարբեր հանգամանքներին, հուզական երանգ հաղորդում առավել կարևոր մտքերին: Ճառերում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հոմանշային կրկնությունների կիրառության դեպքերը, երբ միևնույն բառի կրկնության փոխարեն գործածվում են հոմանիշ բառեր, որոնք, հաջորդելով մեկը մյուսին, ավելի պատկերավոր են ներկայացնում երևույթը կամ գործողությունը, ինչպես՝ «...ամենաբարեձեւ ***կարգաւորութեամբ*** եւ ***վայելչակամութեամբ*** զարդարեալ երկնից պսակողին, ***զմաքուր եւ զպարկեշտասէր*** առագաստ հարսնութեան» (1258), «….այսաւր ***աւետալուր եւ ուրախաբեր*** ձայն հրեշտակապետին առ Կոյսն Մարիամ կարապետող վանգիւք տարահնչող ձայնեալ» (1258): «***Դարձեալ*** բանալով անդրէն զխանութս ալեաց, ***վերստին*** գեղեցկացուսցուք զբանայեղց նուագարանաց գովասանութեանս մերոյ» (1264): «***Խաւարամութ*** եւ նսեմացեալ ***շամանդաղութեամբ աղջամղջով ստուերամածեալ***…» (1251), «***…միգավառ մառախուղամուտ խաւար***, ***եռանդնակայծակ հրալից*** արիւնուտ ահաւոր ***հուր*** » (1254), «***Հրակայծակ*** արիւնախառն սխրալի ահաւորն ***հուր***, ***սեւաթոյր*** եւ ***խաւարաբորբոք*** անիծեալ աւձ» (1255), «Քեւ դաստիարակին աստուածազգեաց ***տղայերամ մանկունք*** սուրբ եկեղեցւոյ» (1256):

«***Աղքատացեալ տնանկք*** աւրհնաբանութեամբ մինչեւ յերկինս բարձրացան» (1262): «Քեւ ***դրոշմեալ*** աստուածակերպ միութեամբ՝ ***կնքին*** ելից եւ մտից մերոց զգայարանք» (1256), «…***ամենազան*** եւ ***պէսպէս գունակ գունակ զարմանազանեալ, պէսպէս*** եւ ***ազգի ազգի*** հարուածովք» (1253), «..այլ եւ ի հեթանոս շառաւեղազործեալ, ***համայնաբոլոր տարածասփիւռ ներծաւալեցաւ***…»(1267): «Ուրախացի՛ր լուսայեղոց դիմակաւ ***բերկրեալ*** եւ ***զուարթալից*** սրտիւ» (1267):

Երբեմն կրկնության գործառույթով կարող են հանդես գալ խոնարհված բայն ու բառային իմաստով հոմանիշ, սակայն ձևով դերբայական քերականական միավորները, ինչպես՝«Վասն զի այսաւր ***աւարտագործեալ կատարաշինեցաւ*** լրումն եկեղեցւոյ»(1260): «Այսաւր արարածք ամենայն լուսով ***փայլագունեալք ճառագայթանան*** գալստեամբ որդւոյն» (1260): «Այսաւր եւ վերին աւդք շահեկանաբար ***սփռեալք տարածանին*** ի պէտս մարդկան գալստեամբ որդւոյն Աստուծոյ» (1261), «Այսաւր ***մաքրագտեալ սրբին*** ամենայն բնութիւնք ջուրց յերեւիլ Աստուծոյ մերոյ» (1263), «…սաղարթաճեմ շարունակեալ որ ի քէն ***մակաշառաւեղեաց ընձիւղեալ*** » (1265): «Ամբարտաւանք յերկիր ***ստորանկեալ կործանեցան*** …» (1262): Այս կառույցները ավելի են ընդգծում հոմանիշ բայերի արտահայտած իմաստները՝ հեղինակին հնարավորություն ընձեռելով դիպուկ ու ճշգրիտ պատկերելու ներկայացվող տեսարանը:

Թ. Քոթենավորի գողտրիկ ճառերի անբաժան տարրերից են համեմատությունները: Ոճական այս հնարքի առատությունը ներբողներում հեղինակի լեզվի էական հատկանիշներից է: Համեմատությունը, ինչպես հայտնի է, կատարվում է ըստ առարկաների, երևույթների միջև եղած ընդհանրության որևէ եզրի, սակայն այդ ընդհանուր հատկանիշը անպայմանորեն կրում է հեղինակի անհատական մոտեցման կնիքը: Ինչպես նշում է Է. Ջրբաշյանը. «Համեմատությունը ոչ միայն առարկաների ընդհանուր գծերն է բացահայտում, այլև հեղինակի վերաբերմունքը, նրա զգացմունքային գնահատականը: Այն սովորաբար առաջ է քաշում, ընդգծում երևույթի բազմազան հատկություններից մեկը, տվյալ դեպքում՝ ամենից էականը»[1]: Գրաբարի ոճական արտահայտչական համակարգում համեմատություններն ունեն տարբեր առարկաների և երևույթների միջև զանազան քանակական ու որակական հարաբերություններն արտահայտելու 3 աստիճան՝ նույնական,

[1] Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1967, էջ 218:

բաղդատական և գերադրական[2]: Համեմատության նույնական աստիճանում ընդգծվում է համեմատվող առարկաների, երևույթների նույնականությունը այս կամ այն հատկանիշով՝ առանց նրանցից որևէ մեկի նկատելի գերազանցությունը նշելու: Այս երևույթի պատկերման համար գրաբարում կիրառվում են մի քանի եղանակներ, որոնցից ամենատարածվածը նախադրությունների կիրառությունն է: Թ. Քոթենավորը նույնական համեմատությունների արտահայտման համար ճառերում գործածում է «***որպէս»***, «***իբրեւ»*** նախադրությունները, որոնք, ստանալով հայցականով խնդիր, վերջինիս հետ միասին դառնում են նախադասության մեկ անդամ. այսպես՝ «Ոսկի՝ ***որպէս*** ինքնակալ եւ յաղթող թագաւորի, կնդրուկ՝ ***որպէս*** Աստուծոյ երկնաւորի եւ մարդասէր բարեկամողի, իսկ զմուռ՝ ***որպէս*** ինքնայաւժար վասն մեր մեռելոյ եւ յերկրի թաղելոյ » (1258), «…եւ ***որպէս*** նոր Իսրայէլ եղաք ապրեալք գալստեամբ որդւոյն Աստուծոյ» (1262): «Պտղաբերեցեր ***որպէս*** ի ծարաւուտ երկրի» (1267): «Իջցէ՛ ***որպէս*** անձրեւ ի վերայ գեղման եւ ***որպէս*** զցաւղ, զի ցողէ յերկիր» (1267): «Եւ ոչ ***իբրեւ*** զաւրինակն յամպն եւ ի ծովն, կամ ***իբրեւ*** զմեծախորհուրդն՝ որ առ Յակոբայն, յորժամ դնէր զգաւազանն ի ջուրսն» (1253): Հեղինակը գեղեցիկ համեմատություն է ստեղծել նաև **առյնօրինակ** բառի միջոցով. «….. ***առյնաւրինակ*** եւ յերկրորդ վայրս եկեսցէ ըստ զգաստ ըստ տեսական վարուց» (1259): Երբեմն էլ համեմատություններ կառուցելու համար օգտվում է նաև գրաբարի համար սովորական «**ըստ»** նախդրի միջոցով կապակցվող շարահյուսական կաղապարներից, ինչպես՝ «.. ***ըստ*** Պաւղոսի առաքելախաւս վարդապետութեանն» (1259), « …մանուկ *ծնաւ* մեզ ***ըստ*** Հոգւոյն նկարակերպութեանն, եւ Որդի բարձրելոյն ***ըստ*** հրեշտակապետին աւետեացն (1266), «…արար խաղաղութիւն ի մեջ երկրի ***ըստ*** Դաւթայ » (1259), «…***ըստ*** Եսայեայ տեսողութեանն, ճշմարտապէս մանուկ ծնաւ մեզ ***ըստ*** Հոգւոյն նկարակերպութեանն եւ Որդի բարձրելոյն ***ըստ*** հրեշտակապետին աւետեացն»(1266), «…***ըստ*** արժանի փառաւորութեանդ՝ խոնարհեալ երկիր պագանէր քեզ » (1254), «…որոյ կոչեցաւ անուն Յիսուս ***ըստ*** հրեշտակին առասանութեան» (1268): Նույնական համեմատության մեկ այլ դրսևորումն այս ներբողներում իրականացվում է -***ա/պէս***, -***ա/բար*** վերջածանցների միջոցով, որոնք, կցվելով բառարմատին, հստակորեն մատնանշում են համեմատության մյուս եզրը հանդիսացող օբյեկտը և այն հատկանիշը, որի հիման վրա

[2] Տե՛ս Թ. Շահվերդյան , Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Եր., 2007, էջ 186:

կատարվում է համեմատությունը[3], այսպես. «Քանզի… ***տղաբար*** կանոնաւ բովանդակի եւ չափի» (1251), «…մեռանի ***անտղաբար*** արտաշնչութեամբն կենդանին» (1252), «… առանց մարմնոյ էր արեան ***յաւէրժաբար*** գոլով» (1253), «…եւ ***համանունաբար*** անուանեալ փայտ ***պիտակապէս*** ըստ միոյ եղանակի…»(1254), «…***հարկաւորապէս*** եւ ***կամաւորաբար*** …զքէն կախեցելոյ անմահ Բանին Աստուծոյ…» (1254), «…***անճառաբար*** յղացար եւ ծնար զԷմմանուէլն, վասն զի ***ճշմարտապէս*** մանուկ ծնաւ մեզ» (1266): «***Գեղեցկապէս*** փութով փոխեցէ՛ք զմարմնաւոր թմբկահարութիւնս ընդ հոգեւորն» (1269):

Համեմատության բաղդատական մակարդակում ցույց է տրվում համեմատվող երևույթներից, առարկաներից մեկի առավելությունը մյուսից, նրա այս կամ այն հատկանշի ավելի կամ պակաս դրսևորումը՝ համեմատած մյուսների հետ[4]: Ճառերում բաղդատական համեմատություն արտահայտելու համար գործածվող լեզվական հնարը «**քան»** նախադրությունն է. «…ըստ քարից յեղանակս տրամադրութեամբ ի վեր ***քան զմիտս եւ զիաւսումն*** մակադրեալ ընդ քեզ շարամերձութեամբն…» (1254), «այսինքն զաստուածային բանն, ***առաւել քան զմեղր բերանոյ*** » (1257):

Գերադրական համեմատությունները ճառերում հանդիպում են հետևյալ շարահյուսական կաղապարներով. «…սքանչելաւք հրատարակեալ ***յոյժ հարկաւորապէս*** բռնադատութեամբ ցնորականաւք վրիպեալք» (1253): «Եռանդակայծակ հրալից արիւնուտ ահաւոր հուրն իջեալ ի վերայ քո, ***յոյժ բիւրապատիկ*** տեւողական արգահատութեամբ՝ պահեցար անկէզ » (1254), «…***յոյժ տենչալի*** զարմազանութեամբ գերարփի ծագմամբ գերարկեալ…» (1254 « ***առաւել բիւրապատիկ*** արգահատութեամբ տնաւրինեալ աստուածութեամբն զքեզ ինքեան բարձեալ ամենեցուն թագաւորն Յիսուս » (1255): «Եւ արդ թէպէտ ***հիահրաշափառագոյն*** եւ յոքնուստ տպաւորեալ ի քեզ աստանաւր խորհուրդ ներմարդութեան եզակի բնութեան Բանին Աստուծոյ » (1255):

Թ. Քոթենավորի ճառերում ոճական հիմնական հնարներից գործածված է նաև հակադրությունը: Բառային մակարդակում ոճական հակադրությունը դրսևորվում է հականիշ բառերի կիրառության միջոցով, որոնք հնարավորություն են ընձեռում առարկաներն ու երևույթները ներկայացնելու հակադիր կողմերից: Հակադիր իմաստ ունեցող բառերի համատեղ գործածությունը հեղինակին թույլ է տալիս բազմակողմանի ներկայացնել նկարագրվող երևույթները, ինչպես նաև արտահայտել

[3] Տե՛ս նշվ. աշխ., էջ 206:
[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 187:

սեփական վերաբերմունքը դրանց նկատմամբ՝ գեղագիտորեն ներգործելով ընթերցողի վրա: Յուրաքանչյուր հակադրություն միաժամանակ արտահայտում է առարկաների և երևույթների համեմատություն, սակայն դրանով հանդերձ՝ հակադրությունն ընդգծում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների ընդհանրությունները, այլ տարբերությունները: Հակադրությունն ավելի ցայտուն արտահայտելու նպատակով հաճախ հականիշները կապվում են տարբեր շաղկապների միջոցով, որոնք այդպիսի ոճական կառույցներում միմյանց են կապակցում հակադիր կողմերում գտնվող երևույթները. «Այսաւր ցնծան բերկրական կցրդիւք եւ գեղազանակ պարախնդութեամբ ***երկնայինք*** *եւ* ***երկրայինք***, այսինքն դասք հրեշտակաց եւ կաճառք մարդկան» (1260): «Դու ես դուռն փակեալ արեւելածագ ***ելից*** եւ ***մտից*** Տեառն Աստուծոյ Իսրայելի» (1268): «Դարձեալ ուրախացի՛ր, ***հարսն*** երկնային եւ ***անհարսնացեալ*** Մարիամ» (1267): «Ուրախացի՛ր, Մարիա՛մ, աւրհնեալդ ***ի տեառէդ*** եւ տարփելի ***անտեսից***» (1268), «…երիտասարդք եւ կուսանք, ***ծերք եւ տղայք,*** գեղեցկապէս փութով փոխեցէ՛ք ***զմարմնավոր*** թմբկահարութիւնս ընդ ***հոգեւորսն*** » (1269), «…առ միութիւնն ***վերնոց*** եւ ***ստորնայնոց*** »(1253): «Քեւ նորոգեալ եղեւ ***երկին*** նոր եւ ***երկիր*** նորոգայարդար եւ ամենայն որ ի նոսա ***երեւելի*** եւ ***աներեւոյթ*** արարածք» (1256), «…զճաշակումն ջրոյն ***դառնութեան՝ քաղցրութիւն*** երեւեցար ի Մեռա» (1254): Իսկ հետևյալ օրինակում հեղինակը մարդկությունն ու աստվածությունն է դնում հակառակ ծայրերում. «… անորակ ***ներմարդութեամբն*** միաւորեալ բնութիւն ***աստուածութեանն*** » (1252), քանի որ, ինչպես Հովհան Օձնեցին է գրում. « Մեկ բնություն և մեկ դեմք ունի Քրիստոս ոչ թե ըստ բնության նույնության կամ ըստ մեկանձնականության, քանզի այս երկուսը միասին գրեթե զրկում են Աստծուն մարդանալուց և մարդուն՝ աստվածանալուց, այլ ըստ Բանի՝ իր մարմնի հետ անճառ միավորության»[5]:

Երբեմն հակադրություններում «**եւ**» համադասական շաղկապը գործածվում է «**բայց**», «**իսկ**» շաղկապների փոխարեն, օրինակ՝ «Այսաւր ***անեղն եղանի,*** եւ ***անտեսն տեսանի*** իւրով մարդեղութեամբ» (1262): «Այսաւր ***անվայրափակն*** եւ ***անբովանդակն բովանդակի*** եւ ***անժամանակն սկզբնաւորի*** իւրով մարդասիրութեամբն» (1262): Այսպիսի կառույցներն ունեն ընդգծված ոճական արտահայտչականություն, որովհետև «**եւ**» շաղկապի ոչ ավանդական, փոխակերպված կիրառության շնորհիվ առավել ցայտուն են դառնում տարբեր առարկաների միջև եղած

[5] Տե՛ս Կորիւն Վարդապետի Մամբրէի Վերծանողի, Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, «Ընդդէմ երեւութականաց», Վենետիկ, 1833, էջ 51-52:

հակասությունները[6]: Հակադիր հարաբերությունները ներբողներում արտահայտվում են նաև շարահարությամբ: Ահա մի քանի բնութագրական օրինակ՝ «Այսաւր փարատեցաւ ***խաւար*** սատանայական առագաստին եւ վարայայտնեալ տեսաք ***զլոյսն*** ճշմարտութեան» (1261): «Այսաւր ***անխոնարհն*** զգլուխն իւրում ծառային ***խոնարհեցուցանէ***»(1263), «…***ամենատես*** աչաց ***տեսական*** Բանին Աստուծոյ…» (1252): Ո՛վ սքանչելի փայտ, ***իմանալի*** խորհուրդ ***ծածկեալ*** …» (1252): «Ամբարտաւանք յերկիր ***ստորանկեալ կործանեցան***, աղքատացեալ տնանկք աւրհնաբանութեամբ մինչեւ յերկինս ***բարձրացան*** » (1262):

Այսպիսով, Թ. Քոթենավորը փոխաբերությունների, մակդիրների, համեմատությունների, հակադրությունների, կրկնությունների վարպետ կիրառմամբ բառին հաղորդում է արտահայտչական նուրբ երանգներ, գործածում զգացմունքների, հույզերի պատկերավոր արտահայտման միջոցներ: Հեղինակի գործածած յուրաքանչյուր ոճական կառույց աչքի է զարնում գեղարվեստական բարձրարվեստ հմտությամբ և հուզական նրբերանգների վարպետ գործածությամբ: Ամեն մի տողը մի ամբողջական պատկեր է՝ գունեղ, շքեղահյուս, որտեղ երևում են հեղինակի հոգու թռիչքը և մտքի ճախրը:

Ս. Գրիգորյան, Ն. Պարոնյան

Բառային արվեստը Թեոդորոս Քոթենավորի «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» և «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ճառերում

Ամփոփում

Թեոդորոս Քոթենավորը մեծ վաստակ ունի հայ եկեղեցական մատենագրության մեջ: Նա գրել է ճառեր, ներբողներ, աստվածաբանական գործեր: Թ. Քոթենավորի ճառերն ու ներբողները լեզվական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այս ստեղծագործությունները առանձնահատուկ են իրենց աստվածաբանական, գեղարվեստական արժանիքներով, հատկապես «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» և «Գովեստ ի սուրբ Աստուածածինն» ճառերը: Թ. Քոթենավորի ճառերն ու ներբողները հարուստ են մակդիրներով, համեմատություններով, կրկնություններով, հակադրություններով: Ոճական այս միջոցների գործածությունը ճառերին հաղորդում է յուրօրինակ արտահայտչականություն և զգացմունքայնություն:

[6] Տե՛ս Թ. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 228:

С. Григорян, Н. Паронян

Лексическое искусство в тирадах Теодора Кртенавора “Хвала Святой Богородице” и “Акафист святому кресту”

Резюме

Теодор Кртенавор развивал широкую летописную деятельность. Он сочинял тирады, оды, богословские труды. Тирады и оды Т. Кртенавора представляют особый интерес в языковом значении. Эти произведения отличаются своими теологическими, художественными достоинствами, особенно тирады “Хвала Святой Богородице” и “Акафист святому кресту богодарящему”.

Оды и тирады Т. Кртенавора изобилуют эпитетами, сравнениями, повторами, антитезами. Использование этих стилистических средств дает тирадам необычайную экспрессию и эмоциональность.

S. Grigoryan, N. Paronyan

Word Art in Theodor Krtenavor’s Tirades “Praise to St. Cross Begiven by God” and “Praise to St. Astvatsatsin (St. Mariam)

Summary

Theodor Krtenavor had a great role in the literary history of Armenian church. He wrote tirades, odes and theological works. Theodor Krtenavor’s tirades and odes are of special interest form the linguistic point of view. These works are unique in their theological, artistic merits; of particular interest are the eulogies entitled - “Praise to St. Cross Begiven by God” and “Praise to St. Astvatsatsin (St. Mariam”). Theodor Krtenavor’s tirades and odes are strikingly rich in epithets, comparisons, repetitions and contrapositions. The usage of these stylistic means gives extraordinary expressiveness and emotive charge to the tirades.